# Աշխատավարձային նախագծերի արշավ մարզային ընկերությունների և նրանց աշխատակիցների համար

Անկանխիկ գործարքները խթանելու նպատակով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ) և VISA ընկերությունը ներկայանում են աշխատավարձային նախագծերի արշավով:

Արշավին կարող են միանալ՝

- ՀՀ մարզերում գործունեություն ծավալող այն իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը, որոնք արշավի գործողության ընթացքում Բանկի հետ կկնքեն պայմանագիր աշխատավարձային նախագծի շրջանակում
- Այն ֆիզիկական անձինք, որոնք աշխատում են ՀՀ մարզերում գործունեություն ծավալող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող գործատուի մոտ և արշավի գործողության ընթացքում աշխատավարձը կսկսեն ստանալ Ամերիաբանկի քարտով

Արշավը գործում է 2024թ. ապրիլի 15-ից մինչև սեպտեմբերի 30-ը ներառյալ:

Արշավի պայմաններն են.

**1. Մարզերում գործունեություն ծավալող և Բանկի հետ արշավի շրջանակում աշխատավարձային նախագծի պայմանագիր կնքող իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր հանդիսացող գործատուների համար**

| Ծառայություն | Առաջարկվող սակագին |
|---|---|
| Visa Business քարտ 4 տարի ժամկետով | Անվճար |
| «Ինտերնետ-Բանկ» համակարգ 4 տարի ժամկետով | Անվճար |

**2. Մարզերում գործունեություն ծավալող և Բանկի հետ արշավի շրջանակում աշխատավարձային նախագծի պայմանագիր կնքող իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր հանդիսացող գործատուների աշխատակիցների համար՝ աշխատավարձային նախագծի ներքո կնքվելիք պայմանագրի շրջանակում (պայմանագիր կնքվում է, եթե աշխատակիցների թիվը 5-ից ավել է)**

| Ծառայություն | Արշավի պայման | |
|---|---|---|
| Visa Classic քարտ | Անվճար | |
| Կանխիկացում այլ բանկերի բանկոմատներից | 0% | |
| Հետվճար՝ դրամային Visa Classic/Gold/Platinum քարտով կատարված անկանխիկ վճարման դիմաց[1] | 1%, առավելագույնը 3,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր գործարքի համար | |
| Անգրավ սպառողական վարկերի, օվերդրաֆտների/վարկային գծերի տարեկան անվանական տոկոսադրույք | Աշխատակիցների միջին աշխատավարձ | Վարկի տոկոսադրույք |
| | Մինչև 100,000 ՀՀ դրամ | 16% |

[1] Հետվճար չի տրամադրվում կոմունալ վճարումների, քարտից քարտ և հաշիվների միջև փոխանցումների, էլեկտրոնային դրամապանակների լիցքավորումների և դրանցով կատարված գործարքների (բացառությամբ Apple Pay և GPay համակարգով կատարված գործարքների) և բուքմեյքերական ընկերությունների հաշիվների լիցքավորումների համար:
Հետվճարը իրականացվում է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում գործող այն քարտային հաշվին, որով կատարվել է վճարումը: Հետվճարը տրամադրվում է մինչև Բանկում հետվճարի հաշվառման ամսվան հաջորդող ամսվա վերջին աշխատանքային օրը:

| | | |
|---|---|---|
| | 100,000 և ավել ՀՀ դրամ | 15% |
| Անգրավ սպառողական վարկերի, օվերդրաֆտների/վարկային գծերի տարեկան փաստացի տոկոսադրույք[2] | Մինչև 100,000 ՀՀ դրամ | 17.2%-17.8% |
| | 100,000 և ավել ՀՀ դրամ | 16.1%-16.6% |
| MyAmeria համակարգի տրամադրում | Անվճար | |
| ՀՀ քաղաքացի չհանդիսացող հաճախորդների համար հաշվի բացման դիտարկման վճար | 3,000 ՀՀ դրամ | |
| Երկու Visa Platinum դասի և երկու Visa Gold դասի քարտի տրամադրում ղեկավար անձանց | Անվճար | |

**3. Մարզերում գործունեություն ծավալող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող գործատուի մոտ աշխատող ֆիզիկական անձ հաճախորդների համար, որոնք արշավի շրջանակում աշխատավարձը կսկսեն ստանալ Ամերիաբանկի քարտով**

| Ծառայություն | Առաջարկվող սակագին |
|---|---|
| Հաշվի բացում հետևյալ ծառայությունների փաթեթով՝ ՀՀ դրամով հաշիվ, MyAmeria համակարգ, մեկ Visa Classic տեսակի քարտ | Անվճար |
| ՀՀ դրամով դեբետային քարտերի դրական մնացորդի վրա հաշվարկվող տարեկան տոկոսադրույք | 3% |
| Կանխիկացում այլ բանկերի բանկոմատներից | 0% |
| Հետվճար՝ փաթեթի շրջանակում բացված դրամային Visa Classic քարտով կատարված անկանխիկ վճարման դիմաց[1] | 1%, առավելագույնը 3,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր գործարքի համար |
| Անգրավ սպառողական վարկերի, օվերդրաֆտների/վարկային գծերի տարեկան անվանական տոկոսադրույք | 17% |
| Անգրավ սպառողական վարկերի, օվերդրաֆտների/վարկային գծերի տարեկան փաստացի տոկոսադրույք[2] | 18.4%-18.9% |
| ՀՀ քաղաքացի չհանդիսացող հաճախորդների համար հաշվի բացման դիտարկման վճար | 3,000 ՀՀ դրամ |

** Եթե քարտապանն իր աշխատավարձն այլևս չի ստանում «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի միջոցով, կամ որևէ հիմքով ազատվել է աշխատանքից, ապա Բանկն իրավասու է ամբողջությամբ կամ մասնակիորեն դադարեցնել աշխատավարձային նախագծերի ներքո տրամադրված վճարային քարտի և մյուս բանկային ծառայությունների հատուկ սակագները և պայմանները և այդ պահից սկսած՝ կիրառել Բանկում գործող քարտի և մյուս ծառայությունների սակագները և պայմանները կամ տվյալ քարտի, ծառայության կամ քարտապանի համար Բանկի*

[2] Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա, իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը Ձեզ համար տոկոսագումարները և վարկի տրամադրման ու սպասարկման գծով բոլոր պարտադիր վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում:

*հայեցողությամբ կիրառելի այլ հատուկ սակագներ: Աշխատանքից ազատված և/կամ այլևս Բանկում սպասարկվող հաշվի միջոցով աշխատավարձ չստացող աշխատակիցների ցանկը տրամադրվում է գործատուի կողմից:*